ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/3632 «20» 11 2014 թ.

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, **N 321 սենյակ, Մ. Զալինյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 2-ը, ժամը 09:45-ը**: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014թ. դեկտեմբերի 2-ին, ժամը 09:45-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատարող՝ Մ. Զալինյան
հեռ. 514-194

Հավելված_**1**
«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Երևանի քաղաքապետարանի կողմից N «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2» ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

---------- ----------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված-2
«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N **«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2»** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ----------ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2				
...	…			
80				

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____ Մասնակցի
անվանումը ¥անունը¤ (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը¤ (ստորագրությունը¤

Կ. Տ.

_____2014 թ.
¥ամսաթիվը, ամիսը¤

Նախագիծ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << *ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2*>>

ք. Երևան <<___>> _____ 20 թ.

<<_____>> , ի դեմս ---------- յանի, որը գործում է ---------- կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն ստանձնում է **տպագրական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ աշխատանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Աշխատանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Աշխատանքի թերի հանձնումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից _____ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ___ օրինակ (Հավելված N 2):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015 թ. դեկտեմբերի 25-ը:

*** Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Աշխատանքի ընդհանուր քանակի բաժանումը ըստ եռամսյակների կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

****** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի սպանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է.

4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

*** 7.5 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝_____ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.10. Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը, ինչպես նաև Երևանի Աջափնյակի, Դավթաշենի Էրեբունու, Կենտրոնի, Մալաթիա–Սեբաստիա, Նոր Նորքի, Նորք–Մարաշի, Շենգավիթի, Քանաքեռ–Զեյթունի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը, յուրաքանչյուրն իր մասով**:

****Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է*

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ**
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

Հավելված թիվ 2
« » 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2» գնման պայմանագրի

Կապալառու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Պատվիրատու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն, ի դեմս ..... և Կապալառուն՝ ի դեմս ....., հիմք ընդունելով որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կապալառուն «....» ..... 2....թ.-ից «....» ..... 2....թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ.Տ

Աշխատանքը ընդունեց
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ.Տ

Հավելված թիվ 1
« » 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/2» գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ						
1	A4 ֆորմատի ձևաթղթեր /բլանկներ/	հատ	Թուղթը՝ 80գ/մ2, /Fedrigoni կամ համարժեքը/, սպիտակությունը 98%, տպագրությունը գունավոր, լոգոտիպի ոսկեփայլ դաջվածք: Ձևաթղթի կենտրոնական մասում լոգոտիպի ստվերային պաշտպանիչ պատկեր: Քաղաքապետի 1-ին տեղակալի, քաղաքապետի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, քաղաքապետի գլխավոր խորհրդականի, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի քաղաքապետի խորհրդականի, քաղաքա-պետարանի, քաղաքապետի որոշումների, կարգադրությունների ձևաթղթեր: Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	200000	
2	A4 ֆորմատի ձևաթղթեր	հատ	Թուղթ՝ 80գ/մ2, սպիտակությունը 98%, տպագրությունը՝ մեկ գույնի: Առաքման թերթիկ, հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար՝ դիմումի /տպագրությունը երկկողմանի/, տեղեկանքի, փաթեթ հ-ի և ստացականի	0	20000	
3	A5 ֆորմատի հանձնարարականի թերթիկ	հատ	A5 ֆորմատ օֆսեթ 80գ սպիտակ թղթի վրա: Տպագրությունը մեկ գույնի, միակողմանի /Երևանի քաղաքապետի և քաղաքապետի 1-ին տեղակալի/:	0	30000	

4	A6 ֆորմատի հանձնարարականի թերթիկ	հատ	A6 ֆորմատ օֆսեթ 80գ սպիտակ թղթի վրա: Տպագրությունը մեկ գույնի, միակողմանի /Երևանի քաղաքապետի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, խորհրդականի, օգնականի, կառուցվածքային ստորաբաժանումների պետերի, հանձնա-ժողովի նախագահի/:	0	275000	
5	Քաղաքացիների մուտքի անցագիր	հատ	A5 ֆորմատ սպիտակ օֆսեթ 60գ թղթի վրա, երկկողմանի տպագրությամբ՝ մեկ գույնի:	0	40000	
6	Ժամանակավոր անցաթուղթ	հատ	250 գրամանոց ստվարաթղթից /100x70/մմ չափերի, միակողմանի տպագրությամբ:	0	500	
7	Ճաշարանի կտրոն	հատ	Սպիտակ օֆսեթ 80գ թղթի վրա, տպագրությունը երկու գույնի, միակողմանի, չափերը՝ 50 մմ x 280 մմ:	0	25000	
8	Կաշվե վկայական	հատ	Երևանի քաղաքապետարանի աշխատակից-ների կաշվե կազմով վկայական, 70մմ x 200մմ չափերի: Կազմի վրա Երևան քաղաքի ոսկեգույն զինանշանը, Հայաստանի Հանրապետություն և Երևանի քաղաքապետարան անվանումները ոսկեգույն տառերով, վկայականի ներսը երկու գույնի, հայերեն և ռուսերեն տպագրությամբ: Վկայականները պատրաստվում են անվանական 1 օրինակ:	0	100	
9	Կաշվե վկայական /Երևանի պատվավոր քաղաքացի/	հատ	Կաշվե կազմով վկայական 205մմ x 70մմ չափերի: Կազմի վրա Երևան քաղաքի զինանշանի և Երևանի պատվավոր քաղաքացի բառերի ոսկեգույն դաջվածքը: Վկայականի ներսի կողմում սոսնձված 95մմ x 65մմ չափերի թղթերի վրա հայերեն և անգլերեն երկգույն տպագրությամբ: Թղթի գունավոր ֆոնի վրա տպագրված է Երևանի զինանշանը:	0	20	
10	Ծանուցագիր	հատ	A5 ֆորմատի, 80 գրամանոց թղթի վրա, միակողմանի տպագրությամբ:	0	10000	
11	Հատուկ համարակալված ձևաթղթեր	հատ	A4 ֆորմատի օֆսեթ 80 գրամանոց սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպագրություն, համարակալված կարմիր գունով:	0	15000	
12	Շնորհակալագրեր գունավոր	հատ	A4 ֆորմատի 300 գրամանոց սպիտակ /անփայլ/ թղթի վրա, միակողմանի գունավոր տպագրություն, անվանական 1 օրինակ:	0	1000	
13	Պատվոգրեր /գունավոր/	հատ	A4 ֆորմատի 300 գրամանոց սպիտակ /անփայլ/ թղթի վրա, միակողմանի գունավոր տպագրություն, անվանական 1 օրինակ:	0	1000	
14	Ուղերձներ /գունավոր/	հատ	A4 ֆորմատի 300 գրամանոց սպիտակ /անփայլ/ թղթի վրա, միակողմանի գունավոր տպագրություն:	0	1000	
15	Ելից գրությունների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	40	
16	Մտից գրությունների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	80	

17	Դիմումների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	30	
18	Ցրիչ գրությունների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	30	
19	Որոշումների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 150 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	10	
20	Կարգադրությունների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 150 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	10	
21	Գրասենյակային գիրք	հատ	Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 100 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	70	
22	Շինարարության վարման գրանցամատյան	հատ	250 գրամանոց ստվարաթղթե կազմով, 10 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, չափեր՝ A4 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ	0	2000	
23	Որդեգրման ենթակա երեխաների հաշվառման մատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	2	
24	Թղթապանակ	հատ	22 X 31/սմ չափի՝ երկկողմանի, դեկորատիվ ստվարաթուղթ պոլիպրոպիլենային ծածկույթով /Fedrigoni կամ համարժեքը/: Ներսի աջ հատվածում գրպանիկ (21X15X0,5) սմ չափի, շապիկի վրա լոգոտիպի եռաչափ պատկերով, ոսկեփայլ դաջվածք: Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	4000	
25	Տոպրակ-1	հատ	/34 x 43 x 12 / սմ չափի՝ 170գ/մ2, /Efalin կամ համարժեքը/, լամինացված, տոպրակի երեսամասում (13X16) սմ լոգոտիպի եռաչափ պատկերով, ոսկեփայլ դաջվածք, բռնակները ոսկեփայլ պարանից, մետաղական ամրակներով: Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	600	
26	Տոպրակ-2	հատ	/26 x 32 x 10/ սմ չափի՝ 170գ/մ2, /Efalin կամ համարժեքը/, լամինացված, տոպրակի երեսամասում (13X16) սմ լոգոտիպի եռաչափ պատկերով, ոսկեփայլ դաջվածք, բռնակները ոսկեփայլ պարանից, մետաղական ամրակներով: Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	300	
27	Հանրային միջոցառումների անցկացման իրազեկումների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	2	
28	Երևանի ավագանուն տրամադրվող նյութերի գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	1	

29	Երևանի ավագանու նախաձեռնությունների գրանցամատյան	հատ	Կոշտ ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 300 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ:	0	1	
30	Օրացույց /շաբաթվա գրառումների գրքույկ/	հատ	/36 x 13/սմ չափի, Իտալական բնական կաշվե (կամ համարժեք) կազմով, կազմը եզրակարված, շապիկի ստորին աջ անկյունում քաղաքապետարանի զինանշանի դաջվածք (ոսկեփայլ/ արծաթափայլ), միջուկի թուղթը՝ 85գ/մ2, 5% դեղին երանգով, քաղաքապետարանի զինանշանի պատկերի ջրանիշով, տպագրությունը 1+1: Միջուկի էջերը թվագրված: Միջուկի թերթերը կարվում են արծաթափայլ կամ ոսկեփայլ մետաղյա գալարներով: Միջուկի էջերի քանակը՝ 120: Միջուկի կողային մասերը ոսկեփայլ կամ արծաթափայլ: 2014թ. համար:	0	150	
31	Օրագիր /ամենօրյա գրառումների գրքույկ/	հատ	/24.3 x 17/սմ չափի, Իտալական բնական կաշվե (կամ համարժեք) կազմով, կազմը եզրակարված, շապիկի ստորին աջ անկյունում քաղաքապետարանի զինանշանի դաջվածք (ոսկեփայլ/ արծաթափայլ), միջուկի թուղթը՝ 85գ/մ2, 5% դեղին երանգով, քաղաքապետարանի զինանշանի պատկերի ջրանիշով, տպագրությունը 1+1: Միջուկի էջերը թվագրված: Միջուկի էջերի քանակը՝ 352: Միջուկի կողային մասերը ոսկեփայլ կամ արծաթափայլ: 2014թ. համար:	0	150	
32	Օրատետր /պոկվող թերթերով/	հատ	/22.3 x 16/սմ չափի, Իտալական բնական կաշվե (կամ համարժեք) կազմով, կազմը եզրակարված, շապիկի ստորին աջ անկյունում քաղաքապետարանի զինանշանի դաջվածք (ոսկեփայլ/ արծաթափայլ), միջուկի թուղթը՝ 85գ/մ2, 5% դեղին երանգով, քաղաքապետարանի զինանշանի պատկերի ջրանիշով, տպագրությունը 1+0: Միջուկի էջերի քանակը՝ 200: Միջուկի կողային մասերը ոսկեփայլ կամ արծաթափայլ: 2014թ. համար:	0	150	
33	Ծրար-1	հատ	/12 x 20/սմ չափի՝ 100 գ/մ 2, սպիտակությունը 98%, տպագրությունը 4+4, ինքնակպչուն սոսնձե շրթունքով, գունավոր տպագրությամբ, լոգոյով, Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	300	
34	Ծրար-2	հատ	/18 x 24/ սմ չափի՝ 100 գ/մ 2, սպիտակությունը 98%, տպագրությունը 4+4, ինքնակպչուն սոսնձե շրթունքով, գունավոր տպագրությամբ, լոգոյով, Երևանի ոսկեզօծ զինանշանով:	0	1000	
35	Ծրար-3	հատ	/22 x 32/ սմ չափի՝ 100 գ/մ 2, սպիտակությունը 98%,	0	2500	
36	Կաշվեպանակ	հատ	/31 x 22.5/սմ չափի, ,Նուբեսե կազմարարական կաշվից, կամ համարժեքը, շագանակագույն, Երևանի ոսկեզոծ զինանշանով:	0	150	

37	Նոթատետր	հատ	/20.5 x 14.5/սմ չափի, Իտալական դեկորատիվ թղթե (կամ համարժեք) կազմով, կազմի ստորին աջ անկյունում քաղաքապետարանի զինանշանի դաջվածք (ոսկեփայլ/արծաթափայլ), միջուկի թուղթը՝ 85գ/մ2, 5% դեղին երանգով, քաղաքապետարանի զինանշանի պատկերի ջրանիշով, տպագրությունը 1+0: Միջուկի թերթերի քանակը՝ 70: Միջուկի կողային մասերը ոսկեփայլ կամ արծաթափայլ: Նոթատետրի միջուկը և կազմը կարվում են արծաթափայլ կամ ոսկեփայլ մետաղալա գալառներով:	0	150	
38	A4 ֆորմատի ձևաթղթեր /քաղաք. բլանկ/	հատ	Թուղթը՝ 100գ/մ2, /Fedrigoni կամ համարժեքը/, սպիտակությունը 98%, ջրանիշով տպագրությունը գունավոր՝ երեք լեզուներով /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ լոգոտիպի ոսկեփայլ դաջվածք: Ձևաթղթի կենտրոնական մասում լոգոտիպի ստվերային պաշտպանիչ պատկեր: Երևանի քաղաքապետի գրության ձևաթուղթ:	0	20000	
Ընդգրկված տեսականիի նմուշները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ						
12, 13, 14 չափաբաժիններում ընդգրկված տեսականու առաքումը /անգամ մեկ հատ/ պետք է կատարվի շտապ՝ որոշ դեպքերում մեկ աշխատանքային օրվա ընթացքում:						
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Հ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
39	Ղեկավարի բլանկ	հատ	A-4 ֆորմատի, 3 գույնի տպագրություն, միակողմանի, թղթի տեսակը օֆսեթ 80գ/ք.մ, տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:	0	15000	
40	Գրանցաթերթիկ	հատ	Միակողմանի, թղթի տեսակը օֆսեթ 10Х14սմ տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:	0	25000	
41	Գործավարական գիրք	հատ	400 թերթ A-4 ֆորմատի21Х30, կոշտ կազմով բարձր որակի, տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:	0	10	
42	Կարգադրության բլանկ	հատ	A-4 ֆորմատի, 3 գույնի տպագրություն, միակողմանի, թղթի տեսակը օֆսեթ 80գ/ք.մ, տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:	0	1000	
43	Որոշման բլանկ	հատ	A-4 ֆորմատի, 3 գույնի տպագրություն, միակողմանի, թղթի տեսակը օֆսեթ 80գ/ք.մ, տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:	0	4000	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Հ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
44	Վարչական շրջանի ղեկավարի բլանկ	հատ	Ձևաթղթերը պետք է տպագրված լինեն միակողմանի A-4 ֆորմատի օֆսեթային թղթի վրա, խտությունը՝ 80 գ/քմ, չորս գույնի (զինանշանը դեղին, վարչական շրջանի անվանումը կապույտ, ռեկվիզիտները սև): Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 90%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է	0	20000	
45	Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի բլանկ	հատ	ֆորմատի օֆսեթային թղթի վրա, խտությունը՝ 80 գ/քմ, չորս գույնի (զինանշանը դեղին, վարչական շրջանի անվանումը կապույտ, ռեկվիզիտները սև): Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 90%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	4000	
46	Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի բլանկ	հատ	ֆորմատի օֆսեթային թղթի վրա, խտությունը՝ 80 գ/քմ, չորս գույնի (զինանշանը դեղին, վարչական շրջանի անվանումը կապույտ, ռեկվիզիտները սև): Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 90%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	1000	
47	Հաշվառման քարտ /գ/հ և հ/հ իրավաբանական անձանց հաշվի քարտ/	հատ	21սմx60սմ չափի թղթի վրա, խտությունը՝ 60 գ/քմ: Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 80%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	3000	
48	Կաշվե վկայական	հատ	կարմիր, կազմի վրա պատկերված լինի Երևանի զինանշանը և գրված՝ Հայաստանի Հանրապետություն, Երևանի քաղաքապետարան:	0	60	
49	Շնորհակալագրեր	հատ	ֆորմատի թղթի վրա, խտությունը՝ 120 գ/քմ, գունավոր, սնդուսափայլ: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	100	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
50	Ղեկավար բլանկեր	հատ	A4 ձևաչափի, երեք գույնի, սրակողմանի տպագրության: Թղթի տեսակը՝ օֆսեթային: Խտությունը՝ 80գ/մ2	0	15000	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
51	Վարչական շրջանի ղեկավարի ձևաթուղթ	հատ	Ձևաթղթերը պետք է տպագրված լինեն միակողմանի A-4 ֆորմատի օֆսեթային՝ խտությունը 80 գ/քմ թղթերի վրա երեք գույնով /զինանշանը դեղին, վարչական շրջանի անվանումը կապույտ, ռեկվիզիտները սև գույներով/: Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 90%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	20000	
52	Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ձևաթուղթ	հատ	Ձևաթղթերը պետք է տպագրված լինեն միակողմանի A-4 ֆորմատի օֆսեթային՝ խտությունը 80 գ/քմ թղթերի վրա երեք գույնով /զինանշանը դեղին, վարչական շրջանի անվանումը կապույտ, ռեկվիզիտները սև գույներով/: Թղթի սպիտակությունը ոչ պակաս քան 90%: Ձևաթղթի նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից:	0	10000	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
53	Մատյան 1	հատ	Մատյանի էջերի թղթի տեսակը՝ օֆսեթային՝ 80-90գ/քմ, մատյանի էջերի քանակը՝ 800 էջ, 1+1,մատյանի չափսերը՝ 60 X 84/ 8, տպագրությունը՝ երկկողմանի, 1 գույնով, մատյանի կազմարարության եղանակը՝ թելակար,սոսնձած, մատյանի կազմը՝ կազմի բումվինիլապատում, կազմի թղթի տեսակը՝ կոշտ կազմ,խրոմերզաց՝ 1500 գ/քմ	0	10	
54	Մատյան 2	հատ	Մատյանի էջերի թղթի տեսակը՝ օֆսեթային՝ 80-90գ/քմ, մատյանի էջերի քանակը՝ 600 էջ,1+1, մատյանի չափսերը՝ 60 X 84/ 8, տպագրությունը՝ երկկողմանի, 1 գույնով, մատյանի կազմարարության եղանակը՝ թելակար,սոսնձած, մատյանի կազմը՝ կազմի բումվինիլապատում, կազմի թղթի տեսակը՝ կոշտ,ստվարաթուղթ կազմ,խրոմերզաց՝ 300 գ/քմ	0	15	
55	Մատյան 3	հատ	Մատյանի էջերի թղթի տեսակը՝ օֆսեթային՝ 80-90գ/քմ, մատյանի էջերի քանակը՝ 800էջ,1+1, մատյանի չափսերը՝ 220x496 մմ, տպագրությունը՝ երկկողմանի, 1 գույնով /հորիզոնական/, մատյանի կազմարարության եղանակը՝ թելակար,սոսնձած, մատյանի կազմը՝ կազմի լաքապատում, կազմի թղթի տեսակը՝ փափուկ կազմ,կավճաթուղթ, 300	0	15	
56	Մատյան 4	հատ	Մատյանի էջերի թղթի տեսակը՝ օֆսեթային՝ 80-90գ/քմ, մատյանի էջերի քանակը՝ 100 թերթ,1+1, մատյանի չափսերը՝ 220x496 մմ, տպագրությունը՝ երկկողմանի, 1 գույնով /հորիզոնական/, մատյանի կազմարարության եղանակը՝ թելակար,սոսնձած, մատյանի կազմը՝ կազմի լաքապատում, կազմի թղթի տեսակը՝ փափուկ կազմ,կավճաթուղթ, 350 գ/քմ	0	40	
*Պայմանագիրը կնքելուց հետո Պատվիրատուի (Ստացողի) կողմից Կատարողին է ներկայացվում պահանջվող մատյանների էջերի						
57	Ղեկավարի և տեղակալի բլանկներ	հատ	Թղթի խտությունը 80գր/ք.մ,թղթի անվանումը՝ օֆսեթային, ստանդարտը՝ ԳՕՍ 9094-89, թղթի չափսը՝ A4 (210 x 297 մմ), տպագրությունը՝ միակողմանի, 4 գույնով	0	40000	
*Պայմանագիրը կնքելուց հետո Պատվիրատուի (Ստացողի) կողմից Կատարողին է ներկայացվում պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային կամ էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթղթերը Կատարողի կողմից ձևավորելուց և յուրաքանչյուր ձևաթղթի մեկական օրինակը տպելուց հետո դրանք համաձայնեցվում են Պատվիրատուի (Ստացողի) հետ:						
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
58	Բլանկ 1	հատ	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի ձևաթուղթ: Թուղթը օվսեթ-80գ A4 Երևան քաղաքի զինանշանը 12.04.2010թ. <<Երևան քաղաքի խորհրդանիշների մասին>> N 85-Ն որոշման համաձայն: Տառերը գրված լինեն ուղղանկյունաձև վահանակի նույն գույնով Arial Armenian ֆոնտով: Տառերի չափսը լինի 16: Տառերի և Երևանի զինանշանի ներքևի հատվածում հորիզոնական գիծ (Table Tools, Design 3pt), գծի ներքևի ձախ հատվածում երկու տող: Առաջին տողում 5.5 սմ հորիզոնական գիծ՝ օր, ամիս, տարեթիվ (տարեթվի վերջին երկու թվերի տեղը թողնվում են ազատ) նշումների համար, երկրորդ տողում գրության համարը նշելու համար: Աջ անկյունում նշվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շենքի	0	30000	
59	Բլանկ 2	հատ	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի որոշման ձևաթուղթ: Թուղթը օվսեթ-80գ A4 Երևան քաղաքի զինանշանը 12.04.2010թ. <<Երևան քաղաքի խորհրդանիշների մասին>> N 85-Ն որոշման համաձայն: Տառերը գրված լինեն ուղղանկյունաձև վահանակի նույն գույնով Arial Armenian ֆոնտով: Տառերի չափսը լինի 16: Տառերի և Երևանի զինանշանի ներքևի հատվածում հորիզոնական գիծ (Table Tools, Design 3pt), գծի ներքևի աջ հատվածում մեկ տող, տողը 5.5 սմ՝ օր, ամիս, տարեթիվ (տարեթվի վերջին երկու թվերը թողնվում են ազատ)	0	30000	

60	Բլանկ 3	հատ	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ձևաթուղթ: Թուղթը օվսեթ-80գ A4 Երևան քաղաքի զինանշանը 12.04.2010թ. <<Երևան քաղաքի խորհրդանիշների մասին>> N 85-Ն որոշման համաձայն: Տառերը գրված լինեն ուղղանկյունաձև վահանակի նույն գույնով Arial Armenian ֆոնտով: Տառերի չափը լինի 16: Տառերի և Երևանի զինանշանի ներքևի հատվածում հորիզոնական գիծ (Table Tools, Design 3pt), գծի ներքևի ձախ հատվածում մեկ երեք տող, առաջինը՝ 5.5 սմ օր, ամիս, տարեթիվ (տարեթվի վերջին երկու թվերը թողնվում են ազատ)նշումների համար, երկրորդը՝ գրության համարը նշելու համար՝ 4սմ՝ տողասկզբում նշելով հ. տառը, երրորդը՝ 4սմ՝ տողասկզբում նշելով Ձեր բառը: Իսկ հորիզոնական գծի ներքևի աջ հատվածում նշվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 0065 Երևան փոստային դասիչը (ինդեքս), շենքի հասցեն և աշխատակազմի	0	5000	
61	Բլանկ 5	հատ	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի կարգադրության ձևաթուղթ: Թուղթը օվսեթ-80գ A4 Երևան քաղաքի զինանշանը 12.04.2010թ. <<Երևան քաղաքի խորհրդանիշների մասին>> N 85-Ն որոշման համաձայն: Տառերը գրված լինեն ուղղանկյունաձև վահանակի նույն գույնով Arial Armenian ֆոնտով: Տառերի չափը լինի 16: Տառերի և Երևանի զինանշանի ներքևի հատվածում հորիզոնական գիծ (Table Tools, Design 3pt), գծի ներքևի աջ հատվածում մեկ տող, տողը 5.5 սմ՝ օր, ամիս, տարեթիվ (տարեթվի վերջին երկու թվերը թողնվում են ազատ)նշումների համար (տարեթվի չափը՝ 11):	0	5000	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
62	Պատվոգիր	հատ	A4 ֆորմատ, կավճապատ 300գ,տպագրությունը միակողմանի 1x 4գույն, յուղային լաք, Հայկ Նահապետի արձանի ուրվապատկերով	0	1000	
63	Շնորհակալագիր	հատ	A4 ֆորմատ, կավճապատ 300գ,տպագրությունը միակողմանի 1x 4գույն, յուղային լաք, Հայկ Նահապետի արձանի ուրվապատկերով	0	1000	
64	ՈՒղերձ	հատ	A4 ֆորմատ, կավճապատ 300գ,տպագրությունը միակողմանի 1x 4գույն, յուղային լաք, Հայկ Նահապետի արձանի ուրվապատկերով	0	500	
65	Վարչական շրջանի բլանկներ	հատ	A4ֆորմատ, օֆսեթ 80գ, տպագրությունը միակողմանի 1x 4գույն	0	6000	
66	Վարչական շրջանի ղեկավարի բլանկներ	հատ	A4ֆորմատ, օֆսեթ 80գ, տպագրությունը միակողմանի 1x 4գույն	0	20000	
67	Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի բլանկներ	հատ	A4ֆորմատ, օֆսեթ 80գ, տպագրությունը միակողմանի 1x 4գույն	0	1000	
68	Թղթապանակ 1	հատ	բացված վիճակում A3ֆորմատ, աջ կողմից ձևավոր գրպան 5մմ հաստությամբ, 300գ ֆուտբորդ, տպագրությունը 1x 0արծաթ,վրան դաջվածք արծաթագույն 7x 7սմ՝(Հայկ Նահապետի արձան) և վարչական շրջանի անվանումը	0	2000	
69	Թղթապանակ 2	հատ	A3 ֆորմատ, ձգվ ծալք, աջ կողմից ձևավոր գրպան 5մմ հաստությամբ,,տպագրությունը 1x 0գույն,յուղային լաք, կավճապատ 300գ,վրան պատկերված Հայկ Նահապետի արձանը,վարչական շրջանի անվանումը	0	1064	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Հ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
70	Վարչական շրջանի ղեկավարի բլանկի տպագրություն	հատ	A4 ձևաչափի, գունավոր, միակողմանի տպագրության, թղթի տեսակը՝ օֆսեթային խտությունը՝ 80 գ/մ2: Ձևաթղթի վերևի ձախ անկյունում պետք է տպագրված լինի Երևանի զինանշանը: զինանշանի աջ կողմից, մեծատառերով պետք է տպագրված լինի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ձախ կողմից, զինանշանի տակ պետք է տպագրված լինի փաստաթղթի համարակալման և ամսաթվի տեղադրման համար նախատսված տողեր N_____ “___” _____ - 20 թ. Աջ կողմից, փաստաթղթերի համարակալման և ամսաթվի տողերին սիմետրիկ պետք է ռպագրված լինի վարչական շրջանի ռեկվիզիտները. ՀՀ ք. Երևան, Ա. Արմենակյան 272 Հեռ. 65-53-93/ Ֆաքս՝ 65-18-55 Էլ. Փոստ՝ norq-marash@yerevan.am Մինչև տպագրությունը բլանկի էսքիզը, օգտագործվող թղթի տեսակը, գույները պետք է համաձայնեցվեն Նորք-Մարաշ	0	2500	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Չ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
71	Բացիկներ	հատ	21x30 սմ բացիկ, 23x32 սմ ծրար, թղթի խտությունը 400 գրամ, գունավոր (4 գույն), թղթի տեսակը՝ կորդենանս (իտալական), ոսկեզօծում, դաջվածք (կոնգռև), տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, գունաբաժանում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Գ. Նժդեհ 26 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	300	
72	Շնորհավորագրեր և պատվոգրեր	հատ	Չափը՝ A4, միակողմանի կավճապատ, քաշը՝ 250 գր., գունավոր (4 գույն), թղթի տեսակը՝ կորդենանս (իտալական), ոսկեզօծում, դաջվածք (կոնգռև), տպագրությունը՝ ՝ միակողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, գունաբաժանում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Գ. Նժդեհ 26 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	305	
ԸՆԴԱՄԵՆԸ						**0**

Հ/Հ	Ձեռք բերվող աշխատանքի ծանվանումը	Չափման միավորը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Մ/Գ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը	
					Ընդամենը	
					Քանակ	Գումար
ՔԱՆԱՔԵՌ–ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ						
73	Շնորհավորական ուղերձներ բացիկներով	հատ	21 x 30 սմ բացիկ, 23 x 32 սմ ծրար, թղթի խտությունը 400 գրամ, գունավոր (4 գույն), թղթի տեսակը՝ կորդենանս (իտալական) , ոսկեզօծում, դաջվածք (կոնգռև) , տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, գունաբաժանում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր	0	1000	
74	<<Վարչական շրջան>> բլանկ	հատ	<<Հայաստանի Հանրապետություն Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան>> A4 ֆորմատի (210 x 297 մմ), գունավոր (4 գույն), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ միակողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, գունաբաժանում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	4000	

75	<<Վարչական շրջանի ղեկավար>> բլանկ	հատ	<<<Հայաստանի Հանրապետություն Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար>> A4 ֆորմատի (210 x 297 մմ), գունավոր (4 գույն), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ միակողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, գունաբաժանում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	8000	
76	Հաշվետվություն	հատ	<<Հաշվետվություն>> A4 ֆորմատի (210 x 297 մմ), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր	0	5000	

77	Ղեկավարի հանձնարարական թերթիկ	հատ	<<Ղեկավարի հանձնարարականի թերթիկ>> 110 x 160 մմ, թղթի խտությունը 70-80գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ միակողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	8000	
78	ԱՄՓՈՓԱԳԻՐ /Աղբահանության վճարումների կանխիկ ընդունման/	հատ	<<ԱՄՓՈՓԱԳԻՐ>> /Աղբահանության վճարումների կանխիկ ընդունման/ A4 ֆորմատի (210 x 297 մմ), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	20000	

79	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1	հատ	<<ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1>> A4 ֆորմատի (210 x 297 մմ), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	10000	
80	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2	հատ	<<ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2>> A4 ֆորմատի (210 x 297 մմ), թղթի խտությունը 80-90գրամ, թղթի տեսակը՝ կավճապատ, անփայլ, տպագրությունը՝ երկկողմանի: Կատարողի կողմից իրականացվում է համակարգչային ձևավորում, սրբագրում, ֆորմայի պատրաստում, մատակարարում: Կատարողը պատվիրատուի գործունեության վայրում (Դ.Անհաղթի 11 հասցեում) ստանում է պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային տարբերակով: Ըստ որի տպագրված 1 օրինակ նմուշը ներկայացնում է Պատվիրատուին հաստատման, ինչից հետո միայն իրականացվում է տպագրությունը: Պատրաստի նյութերի տեղափոխումը, հանձնումը պատվիրատուին կատարվում է կատարողի կողմից՝ իր միջոցներով և հաշվին:	0	2000	
ԸՆԴԱՄԵՆԸ						0
ԸՆԴԱՄԵՆԸ /ԱՄԲՈՂՋ/						**0**